

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՐՁԱԳԱՆԳ

Մեր Թղթակիցը տոբթ. Արամայիս Սրապեան կը զրկէ մեզի Միլանէն Մայիս 28-ի հանդէսին նկարաւորութիւնը, զոր անփոփոխ կը հրատարակենք ստորեւ:

Միլանոյի մէջ, նախաձեռնութեամբ Իտալիոյ Հայ Մշակութային Միութեան, արտակարգ յաւելութեամբ տօնուեցաւ մեր ժամանակակից պատմութեան ամենէն հոյակապ թուականներէն Մայիս 28ի հրաշքը: Ներկայ էր հայ և իտալացի ընտիր և հոծ բազմութիւն մը: Միլանոյի հայութիւնը Մայիս 28ին իր սրտագեղ մասնակցութեամբ, համերաշխութեան և համախոհութեան այնպիսի ապացոյց մը ի յայտ բերաւ որ փափաքելի պիտի ըլլար զայն բազմապատկուած և ծաւալած տեսնել բոլոր գաղութներուն մէջ անխտիր:

Հանդէսը բացուեցաւ «Բամ ֆորտան» ուր, որմէ վերջ խօսք ասու Տօբթ. Արամայիս Սրապեան, որ իր հակիրճ ճառը փակեց հետեւեալ խօսքերով. «Մայիս 28ը կոչուած է համայն հայութեան տօնն ըլլալու. յաղթանակի տօն մը, հաւաքի, կենսունակութեան, յամառ մաքառումներով և գերագոյն զոհողութիւններով շահուած յաղթանակի տօն մը, որ իր երեւումով երջանկութեամբ լեցուց համայն հայութեան սիրտը, ու մինչեւ հիմա, երբ մեր շուրջ կը տրոփէ օտարութիւնը և կը բարձրանան հայրենաբազումութեան հովերն ու ալիքները, ան, Մայիս 28ը մեզ կը դիմէ դէս իր իմաստով, իր գեղեցկութեամբ, իր բարձր և անձեռնմխելի հոգեկրկնութեամբ, որովհետեւ ան ցեղին ձայնն է, ցեղին իսկութիւնն ու հոգին, ծնած ըլլալով անոր արիւնէն որպէս յայտնատեսութիւն մը և որպէս նոր դարաշրջանի մը բարձրախօսն ու լուսարձակը»:

Գրաւոր ճառ մը կարդաց Տօբթ. Տիգրան Ալեքսանեան, մասնաւորապէս ծանրանալով Մայիս 28ի պատմականին և բարոյական տարողութեան վրայ: Յաջորդաբար խօսք տուին Պ. Գալուստ Մկրեան և Պ. Յուսիկ Աշրաֆեան, որոնք իրենց կարգին ողջունեցին Մայիս 28ը իբրեւ հարգատար արտայայտութիւնը համայն հայ ժողովուրդին միաձայն կամքին, կերտելու համար իր ազգային ազատութիւնն ու անկախութիւնը: Արտասանութիւններ ըրին փոքրիկն Անայիս Տիւրիզեան (Վարուժանէն) և Պ. Յարութիւն Ա.

լեքսանեան (Ալիշանէն), արժանանալով ջերմ ծափերու: Երգչախումբը երգեց նաեւ «Լոսին չկար»-ն ու «Տէր, կեցո՛ւն»: Օր. Մայտա Միտիկեան շատ յուզիչ կերպով երգեց «Տէր, կեցո՛ւն» իր մասը: Հանդէսին մասնայատուկ հմայք մը տուաւ Պ. Կիրակ Սազըզլեան, շքեղ շանաւարտ Ռումանիոյ Պետական երաժշտանոցէն, երգելով կտորներ «Անոյշ»-էն, Կոմիտասէն «Կոռնկ»-ն ու «Քելէ՛, քելէ՛»-ն, և Ալեմշահի «Խմ իղձը»: Յետակ, կրթուած, յուզուեալ և հզօր ձայն մը որ կու գայ հոգիին խորունկէն, համակ հայկականութիւն իր զգալու և արտայայտուելու մերթ բռնն և մերթ ալ հեզ երգեցողութեամբ: Մեր համակրելի արուեստագէտին դաշնակով կ'ընկերանար Օր. Անահիտ Կիւլաշեկեան: Հանդիսականները ջերմագին ծափերով ողջունեցին և փակեցին Մայիս 28ի տօնակատարութիւնը Միլանոյի մէջ:

Ա. Ս.

ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅ ՄԻԻԹԱՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԱՄԱՎԵՐՁԻ ՀԱՆԴԵՍԸ

Դպրոցական հանդէսներու եղանակն էր: Յուլիս 29ին Աղեքսանդրիոյ Միլիթ. Վարժարանն ալ իր հանդէսը սարքեց Շուրջի հմայիչ վարժարանի խաղաղաշին մէջ: Առաջին տարին բոլորած նոր միջավայրին մէջ՝ աստջին ամսվերջի հանդէսն էր այս:

Խանդավառութիւնը տիրած էր աշակերտութեան, մանաւանդ գիշերօթիկներուն մէջ, որոնք կանխաւ հրաւիրած էին իրենց հեռաւոր ծնողները չփախցնելու համար այս «շատ գեղեցիկ» հանդէսը:

Հանդիսականներու բազմութիւնը զլեց անցաւ Տեսչութեան ակնկալութիւնը: Հանդէսը կը պատուէին իրենց ներկայութեամբ իտալական հիւպատոսին ներկայացուցիչը, Տէր Գր. Վ. Կերկերեան՝ Պատրիարքական փոխանորդ, Անաբատ Յղութեան Քոյրեր, պարոնայք՝ Միլիթ Գլըճեան, Լեւոն Մաթոսեան, Յովհ. Գառնիֆեան, Նասիպ Նասիպեան, Պալեան եղբայր, Չէրքէզեան, Տօբթ. Գազանճեան և ուրիշներ և անթիւ բազմութիւն մը աշակերտաց ծնողներու և բարեկամներու:

Հանդէսը բացուեցաւ ժամը 5ին եգիպտական



ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅ ՄԻԻԹ. ՎԱՐԺԱՐԱՆԻ ՏԵՍՉՈՒԹԻՒՆԸ՝ ԳԻՇԵՐՕԹԻԿ ԱՇԱԿԵՐՏՆԵՐՈՒ ԽՈՒՄԲՈՎ



ՄԱՆԿԱՊԱՐՏԵՋԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ՝ ԽԱՂԻ ՊԱՀՈՒՆ